

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՄԱՐԶ
ԱՐԱԳԱԾՈՏՆ

ԱՐԱԳԱԾԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Գ.Արագած
ՀՎՀՀ 05200786
E:mail

Հեռ. (091) 335599
(077) 002035
(093) 815740
www.aragac.am

թիվ 176
07 Նոյեմբերի 2016թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ
պարոն Գ. Գյոզալյանին

Հարգելի պարոն մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Արագածոտն մարզի Արագած համայնքի ավագանու
31.10.2016 թվականի թիվ 32-43-Ն նիստի որոշումները:

Արագած համայնքի ուղեակառ



Հ. Հովհաննիսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի
Արագած համայնք, Արագածյան 1-ին փողոց 1-ին նրբանցք 5,
077-00-20-35, 091-335599, www.aragac.am

ՈՐՈՇՈՒՄ

«31» Հոկտեմբերի 2016 թվականի N 32-Ն

ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07.10.2016Թ ԹԻՎ 8 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին կետի
1-ին եթակետով Արագած համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Անվավեր ճանաչել Արագած համայնքի ավագանու՝ 07.10.2016թ-ի թիվ 8
արձանագրության թիվ 26, 27, 28, 29, 30, 31-ն որոշումները:

Կողմ — 8

Դեմ 0

Ձեռնպահ 0

ԱՎԴԱԼՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱԶԱՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳՈՐ

ԴԱՎԹՅԱՆ ՄՆԱՅԱԿԱՆ

ԽԱԼԱԹՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԼՈՒԿԱՇ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՖՈՒՐՄԱՆ

(Handwritten signatures of the 8 members of the community council)



ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐ

(Handwritten signature of the community council leader)

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի
Արագած համայնք, Արագածյան 1 ին փողոց 1 ին նրբանցք 5,
077-00-20-35, 091-335599, www.aragac.am

ՈՐՈՇՈՒՄ

«31» Հոկտեմբերի 2016 թվականի N 33-Ն

ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ
ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի
1-ին կետի պահանջներով Արագած համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Արագած համայնքի 2016թ-ի սեպտեմբերի 18-ին ՏԻՄ ընտրություններում
կայացած նորընտիր ավագանու կանոնակարգը համաձայն հավելված 1-ի:

Կողմ 8

Դեմ 0

Ձեռնպահ 0

ԱՎԴԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱԶԱՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՈՈՍԱՆ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳՈՌ

ՂԱՎԹՅԱՆ ՄՆԱՅԱԿԱՆ

ԽԱՆԱԹՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԼՈՒԿԱՇ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՖՈՒՐՄԱՆ

[Handwritten signatures of the 8 members of the community council]



ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *[Signature]* Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ



Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնակարգը ընդունվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա
2. Համայնքի ավագանին իրականացնում է «Սահմանադրությամբ», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված լիազորությունները և գործում է սույն կանոնակարգին համապատասխան:
3. Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է, որը ընտրվում է չորս տարի ժամկետով: Համայնքի ավագանի կարող են ընտրվել առնվազն երկու տարի տվյալ համայնքի բնակիչ համարվող քաղաքացիները:
4. Համայնքի ավագանին իր լիազորություններն ստանձնում է ոչ շուտ քան նախորդ ավագանու լիազորությունների ժամկետի ավարտման հաջորդ օրը:
5. Համայնքի ավագանու գործունեությունը իրականացվում է համայնքի ղեկավարի աշխատատեղում (նստավայրում)

Համայնքի ավագանու գործունեության սկզբունքներ են՝

ա. Ընդհանուր իրավասությունը համայնքային շահերին վերաբերվող, ցանկացած գործունեության իրականացման իրավունքը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

բ. Ինքնուրունությունը և սեփական պատասխանատվությունը տեղական ինքնակառավարում իրականացնելիս:

գ. Համայնքի անդամների առջև հաշվետու լինելը:

դ. Ավագանու գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովումը:

ե. Համայնքի ավագանին իրականացնում է սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորություններ:

Համայնքի ավագանու գործունեության կազմակերպումը

1. Համայնքի ավագանին կազմավորված է համարվում, եթե ընտրվել են ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին:
2. Համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Ավագանին կարող է անցկացնել արտահերթ նիստեր:
3. Համայնքի ավագանին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար, իր որոշմամբ կարող է ստեղծել մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

4. Համայնքի ղեկավարը համայնքի նստավայրում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում համայնքի ավագանու՝ սույն օրենքով, ինչպես նաև ավագանու կանոնակարգով նախատեսված կարգով գործունեության իրականացման համար:
5. Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերող ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ և ուղերձներ: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված դեպքերում ավագանին կազմում է արձանագրություններ:
6. Համայնքի շահերին վերաբերող, բայց իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի առնչությամբ ավագանին կարող է ընդունել ուղերձներ՝ ուղղված համայնքի բնակչությանը, համայնքի ղեկավարին, մարզպետին կամ պետական այլ մարմիններին:
7. Պետական մարմինները կամ համայնքի ղեկավարն ավագանու ընդունած ուղերձն ստանալու օրվանից մերկամսյա ժամկետում պարտավոր են քննության առնել և արդյունքների մասին պաշտոնապես տեղեկացնել ավագանուն:

Համայնքի ավագանու նիստի օրակարգը և որոշման նախագծերի նախապատրաստումը

1. Համայնքի ավագանու նիստերի օրակարգի նախագիծը ձևավորում են համայնքի ղեկավարը և ավագանու անդամները՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին նիստից առնվազն տասը օր առաջ ներկայացրած գրավոր հարցերից:
2. Հարցերի հեղինակները պետք է ներկայացնեն որոշման նախագծեր: Յուրաքանչյուր նախագծին կցվում են դրա ընդունման անհրաժեշտության հիմնավորումները և յուրաքանչյուր որոշման նախագծի իրականացման ֆինանսական ծախսերի նախահաշիվները:
3. Նիստի օրակարգի նախագիծը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը նիստն սկսվելուց առնվազն յոթ օր առաջ տրամադրվում են ավագանու անդամներին:
4. Նիստի օրակարգը հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ:

Տեղեկացումը համայնքի ավագանու նիստերի մասին

1. Ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է տեղեկություն ավագանու նիստի ժամանակի, վայրի վերաբերյալ և օրակարգի նախագիծը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար:
2. Հնարավորության դեպքում այդ տեղեկությունը լրացուցիչ կերպով կարող է տարածվել զանգվածային լրատվության միջոցներով և ինտերնետային ցանցի միջոցով:
3. Ավագանու անդամներին տրամադրված, նիստի հետ կապված փաստաթղթերը, եթե դրանք քննարկվելու են դռնբաց նիստում, պետք է դրված լինեն համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար մատչելի տեղում:
4. Անձանց պահանջով նրանց պետք է տրամադրվեն այդ փաստաթղթերի պատճենները՝ դրա ծախսերը ծածկող վճարի դիմաց:
5. Սույն հոդվածով նախատեսված փաստաթղթերի հրապարակումները փակցնելու և դնելու տեղերը սահմանվում են ավագանու աշխատակարգով:

Նորընտիր ավագանու առաջին նիստը

- Նորընտիր ավագանու առաջին նիստը գումարվում է ոչ ուշ, քան ավագանու լիազորություններն ստանձնելու պահից քսան օրվա ընթացքում:

Համայնքի ավագանու նիստը

1. Համայնքի ավագանու նիստը հրավիրում և վարում է համայնքի ղեկավարը կամ պաշտոնակատարը, նրանք ունեն խորհրդակցական ձայնի իրավունք:
2. Համայնքի ավագանու նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են ավագանու անդամների կեսից ավելին: Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում նիստի իրավազորությունը, կամ նիստին չի ներկայանում համայնքի ղեկավարը, և նիստը չի սկսվում, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են ավագանու՝ նիստին ներկայացած անդամները:
3. Համայնքի ավագանու որոշումները և ուղերձներն ընդունվում են ավագանու նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:
4. Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները, որոնց դիմաց նրանք ստորագրում են: Համայնքի ավագանու որոշումը կնքում է համայնքի ղեկավարը:

5. Համայնքի ավագանու նիստը շարունակվում է մինչև օրակարգի սպառումը: Նիստը կարող է ընդհատվել ավագանու որոշմամբ կամ սույն կանոնակարգով նախատեսված դեպքերում:
6. Համայնքի ավագանու նիստը դռնբաց է: Առանձին դեպքերում ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ նիստ:
7. Համայնքի ավագանին նիստին կարող է հրավիրել և լսել ցանկացած անձի: Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցները:
8. Համայնքի ավագանու որոշումների վերաբերյալ համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում ավագանուն կարող է ներկայացնել գրավոր առարկություններ և առաջարկություններ համապատասխան հիմնավորումներով, եթե ավագանու որոշումը, իր կարծիքով, հակասում է օրենքին կամ ավագանու նախկին որոշումներին:
9. Եթե համայնքի ղեկավարն ավագանու որոշման դեմ առարկում է, ապա եռօրյա ժամկետում հրավիրում է ավագանու արտահերթ նիստ, իսկ որոշման կատարումը հետաձգվում է՝ մինչև այդ նիստում ավագանու կողմից դրա քննարկումը: Ավագանին քննարկում է նշված առարկությունները և որոշում է ընդունում նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ: Նշված նիստում և նախատեսված ժամկետներում որոշումը չվերանայելու կամ ավագանու նիստը չկայանալու դեպքում որոշումն ուժի մեջ է մտնում և ենթակա է պարտադիր կատարման:
10. Համայնքի ավագանու որոշումները համայնքի՝ ղեկավարը կարող է բողոքարկել դատական կարգով:
11. Համայնքի ավագանու անդամը համայնքի ղեկավարի որոշումները ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող է պահանջել հրավիրել ավագանու արտահերթ նիստ, եթե համայնքի ղեկավարի որոշումը իր կարծիքով հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին: Այս դեպքում ավագանու նիստ պետք է հրավիրվի այդ մասին պահանջը համայնքի ղեկավարին ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում սույն օրենքի 15-րդ հոդվածով սահմանված կարգով: Եթե համայնքի ավագանին գտնի, որ համայնքի ղեկավարի որոշումը (այսուհետ՝ բողոքարկվող որոշում) հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին, ապա նա պարտավոր է համայնքի ղեկավարին ներկայացնել գրավոր առարկություններ ու առաջարկություններ՝ համապատասխան հիմնավորումներով՝ առաջարկելով համայնքի ղեկավարին փոխելու իր բողոքարկվող որոշումը:
12. Համայնքի ղեկավարի բողոքարկվող որոշումը փոփոխելու մասին համայնքի ավագանու որոշումը համայնքի ղեկավարին հանձնելու պահից համայնքի

ղեկավարի բողոքարկվող որոշման գործողությունը կասեցվում է մինչև համայնքի ղեկավարի կողմից դրա քննարկումը, եթե բողոքարկվող որոշումը դեռևս չի կատարվել, և եթե բողոքարկվող որոշման կատարումը հնարավոր է հետաձգել:

13. Համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում պարտավոր է քննարկել համայնքի ավագանու որոշումը և դրա վերաբերյալ կայացնել իր բողոքարկվող որոշումը օրենսդրությանը կամ համայնքի ավագանու որոշումների համապատասխանեցնելու կամ համայնքի ավագանու որոշումը չընդունելու մասին: Իր որոշումը համայնքի ղեկավարը պարտավոր է անմիջապես ուղարկել համայնքի ավագանու անդամներին: Համայնքի ղեկավարի կողմից սույն մասով նշված համապատասխան որոշումներից որևէ մեկն ընդունելու պահից որոշման կասեցումը դադարեցվում է:
14. Եթե համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում համայնքի ավագանու որոշման վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում, ապա համայնքի ղեկավարի բողոքարկվող որոշումը համարվում է վերացված:
15. Համայնքի ղեկավարի որոշումները համայնքի ավագանին կարող է բողոքարկել դատական կարգով:
16. Համայնքի ավագանու նիստը վարվում է հայերեն լեզվով:
17. Համայնքի ավագանու հերթական նիստերը գումարվում են յուրաքանչյուր ամսի 20-25-ը ընկած ժամանակահատվածում, ցանկացած աշխատանքային օր: Օրը որոշում է համայնքի ղեկավարը ժամը 17⁰⁰ ից և կարող է շարունակվել մինչև 22⁰⁰ ն:

Համայնքի ավագանու արտահերթ նիստը

1. Համայնքի ավագանու արտահերթ նիստ գումարում է համայնքի ղեկավարը կամ նրա պաշտոնակատարը՝ իր կամ ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ:
2. Ավագանու արտահերթ նիստն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում:
3. Արտահերթ նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերն ավագանու անդամներին տրամադրվում են նիստից մեկ օր առաջ:
4. Արտահերթ և հերթական նիստերում քննարկվող հարցերի որոշման նախագծերի ընդունման համար անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվում են համանման պահանջներ:

Ավագանու նիստում հարցեր քննարկելու և որոշումներ ընդունելու կարգը

1. Ավագանու նիստը սկսվում է անդամների հաշվառմամբ, որը անցկացվում է համայնքի ղեկավարի քարտուղարի կողմից:
2. Ավագանու նիստում օրակարգային հարցի քննարկումը սկսվում է հարցը առաջարկողի զեկուցմամբ: Ձեկուցողին տրվում են հարցեր, որոնք պետք է ձևակերպված լինեն հստակ և հակիրճ:
3. Ավագանու նիստը վարելու կարգի վերաբերյալ առաջարկությունները արվում են մինչև մտքերի փոխանակության սկսելը: Մտքերի փոխանակականությանը բացի ավագանու անդամներից և համայնքի ղեկավարից, այլ անձինք կարող են մասնակցել միայն ավագանու որոշմամբ:
4. Ավագանու նիստում օրակարգային յուրաքանչյուր հարցի վերաբերյալ կարելի է ելույթ ունենալ ոչ ավելի քան երկու անգամ: Ելույթի իրավունքի զիջում այլ անձի չի թույլատրվում: Ձեկուցողին ելույթի համար տրվում է մինչև 20 րոպե ժամանակ: Յուրաքանչյուր ելույթ ունեցողի, առաջին ելույթի համար տրվում է մինչև 10 րոպե, երկրորդ ելույթի համար 5 րոպե ժամանակ: Համայնքի ղեկավարը անհրաժեշտության դեպքում ելույթի ժամանակը կարող է ավելացնել մինչև 3 րոպե: Ելույթ ունեցողին հարցեր չեն տրվում:
5. Մտքերի փոխանակության ժամանակ, համայնքի ավագանու նիստերում արտահերթ ձայնի իրավունք ունի համայնքի ղեկավարը, որի ելույթի ժամանակը չի սահմանափակվում:
6. Մտքերի փոխանակությունը ավարտվում է հարցը զեկուցողի մինչև 10 րոպե տևողությամբ եզրափակիչ խոսքով:
7. Հարցը զեկուցողի առաջարկությամբ դրվում է քվեարկության: Հարցը զեկուցողի առաջարկությունները (որոշման նախագիծ) չընդունվելու դեպքում, քվեարկության են դրվում մտքերի փոխանակության ժամանակ արված մյուս առաջարկությունները: Այդ առաջարկությունների քվեարկության կարգը և հաջորդականությունը սահմանվում է համայնքի ղեկավարը:
8. Ավագանու նիստի օրակարգ մտած հարցի որոշման նախագիծը չընդունելու մասին առաջարկությունը չի քվեարկվում: Իրենց վերաբերմունքը ավագանու անդամները արտահայտում են քվեարկող նախագիծը քվեարկելու միջոցով:
9. Քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումները ընդունվում են բաց քվեարկությամբ: Փակ քվեարկությամբ որոշումներ ընդունելու հատուկ կարգը , անհրաժեշտության դեպքում սահմանվում է ավագանու կողմից:
10. Յուրաքանչյուր քվեարկության ժամանակ, ավագանու անդամը ունի մեկ ձայնի իրավունք՝ կողմ դեմ կամ ձեռնպահ: Քվեարկության չմասնակցած ավագանու անդամը իրավունք չունի քվեարկելու քվեարկությունից հետո:

11. Քվեարկությունը սկսելուց առաջ նախագահողը կրկնում է քվեարկության դրվող առաջարկությունը, հիշեցնում է, թե ձայների ինչ քանակով է ընդունվում որոշումը: Եթե նախագահողը հարցը դնում է քվեարկության, ոչ ոք չի կարող միջամտել քանի դեռ չեն հայտարարվել քվեարկության արդյունքները:
12. Ավագանու անդամը քվեարկում է անձամբ: Քվեարկության իրավունքի զիջում չի թույլատրվում: Քվեարկությունից հետո համայնքի ղեկավարը բարձրաձայն հայտարարում է քվեարկության արդյունքները:
13. Ավագանու փակ քվեարկությամբ որոշումներ ընդունելու հատուկ կարգը վերաբերվում է համայնքի ղեկավարի պաշտոնակ անելու և համայնքի ավագանու անդամի քվեարկությունների կեսից բացակայություններն անհարգելի ճանաչելու մասին որոշումներին, ինչպես նաև ավագանու որոշմամբ նաև այլ դեպքերի:
14. Համայնքի ավագանու ընդունած որոշումների մեկ օրինակը, համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը 7 օրյա ժամկետում ուղարկում է մարզպետարան:
15. Համայնքի ավագանու որոշումներն ուժի մեջ են մտնում ընդունման պահից: Համայնքի ավագանու որոշումները և ուղերձը ենթակա են պարտադիր հրապարակման համայնքի ղեկավարի կողմից, որոշումը և ուղերձը ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում:

Համայնքի ավագանու իրավասությունը

Համայնքի ավագանին «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված կարգով`

1) ընդունում է իր կանոնակարգը «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի պահանջներին համապատասխան.

2) հաստատում է համայնքի զարգացման ծրագիրը

3) հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի` համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

4) վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը.

5) որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները` համայնքի ղեկավարի ներկայացմամբ.

6) նախաձեռնում և օրենքով սահմանված կարգով նշանակում է տեղական հանրաքվե.

7) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ.

7.1) դատական կարգով կարող է վիճարկել համայնքի ղեկավարի՝ օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումները.

8) որոշում է համայնքի ղեկավարի վարձատրության չափը.

9) որոշում է կայացնում առաջարկություն ներկայացնել մարզպետին, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետին, համայնքի ղեկավարին պաշտոնաձև անելու վերաբերյալ.

10) որոշում է կայացնում միջհամայնքային միավորումներ ձևավորելու մասին, ինչպես նաև առաջարկություն է ներկայացնում պետական լիազորված մարմին՝ այլ համայնքների հետ միավորվելով նոր համայնք ստեղծելու վերաբերյալ.

11) որոշում է կայացնում միջհամայնքային միավորումում իր ներկայացուցիչը նշանակելու վերաբերյալ.

12) որոշում է կայացնում պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից համայնքի խնդիրներին վերաբերող և օրենքով սահմանված գաղտնի տեղեկություններ չպարունակող փաստաթղթեր ստանալու վերաբերյալ: Այդ պահանջի կատարումը մեկ ամսյա ժամկետում պարտադիր է պետական մարմինների և պաշտոնատար անձանց համար.

13) որոշում է կայացնում ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ.

14) օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.

15) իր որոշմամբ համաձայնություն է տալիս համայնքի ղեկավարի ներկայացրած՝ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին.

16) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատում է համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերը: Այդ մարմիններում ավագանու առաջադրած ներկայացուցիչների թիվը կարող է լինել միայն կեսից պակաս.

17) հաստատում է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները՝ օրենքով սահմանված կարգով.

18) սահմանում է օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը.

19) սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.

20) համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, հաստատում է դրանց վարձավճարների և օտարման գների չափերը և պայմանները, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գները.

21) որոշում է կայացնում համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակառուցվածքային կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ.

22) իր որոշմամբ վավերացնում է Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների համայնքների հետ համագործակցելու մասին պայմանագրերը: Համայնքների գործունեությունը համակարգելու, ինչպես նաև ընդհանուր շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով որոշում է կայացնում համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամության վճարները մուծելու մասին.

23) որոշում է կայացնում վարկերի և օրենքով սահմանված կարգով այլ միջոցների ներգրավման վերաբերյալ.

24) որոշում է կայացնում գյուղական և քաղաքային համայնքների ավագանիների կողմից՝ իրենց կանոնակարգերին համապատասխան Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու կամ պատվավոր կոչումից զրկելու վերաբերյալ.

25) որոշում է կայացնում համայնքի գիմանշանի վերաբերյալ.

26) հաստատում է համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

27) հաստատում է քաղաքային և գյուղական համայնքների գլխավոր հատակագծերը և գոտիավորման փաստաթղթերը, ինչպես նաև «Քաղաքաշինության մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերը, որոնց պատվիրատուն է համայնքը.

28) հաստատում է բնակավայրի քաղաքաշինական կանոնադրությունը.

29) հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

30) պետական լիազորված մարմին առաջարկություն է ներկայացնում կամ համաձայնություն է տալիս համայնքի անվանափոխության վերաբերյալ.

31) օրենսդրությամբ սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների նորմատիվ ակտերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցերով կարող է դիմել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան:

Համայնքի ավագանին իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Համայնքի ավագանու առաջարկությունը համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին

- Համայնքի ղեկավարի պաշտոնանկության վերաբերյալ առաջարկությունը կարող է արվել համայնքի ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի գրավոր նախաձեռնությամբ:
- Այդ առաջարկությունը համայնքի ավագանին կարող է անել համայնքի ղեկավարի կողմից համայնքի բյուջե փաստացի ստացված եկամուտների սահմաններում պարտադիր լիազորությունները չկատարելու կամ պետության պատվիրակած լիազորություններն անբավարար կատարելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ անվավեր են ճանաչվել համայնքի ղեկավարի՝ օրենքին կամ իրավական այլ ակտերին հակասող մի շարք որոշումները, կամ առկա է համայնքի ղեկավարի կողմից ավագանու որոշումները պարբերաբար խախտելու վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումը: Այդ նիստին համայնքի ղեկավարի անհարգելի պատճառով չներկայանալու դեպքում համայնքի ավագանին կազմում է արձանագրություն, որը եռօրյա ժամկետում ուղարկվում է մարզպետին: Արձանագրությունը մարզպետի համար հիմք է իր կողմից համայնքի ղեկավարի անվստահության գործընթացը նախաձեռնելու համար:

- Համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու առաջարկությունն ընդունվում է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի ձայների կեսից ավելիով: Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկվում է մարզպետին, Երևանում՝ Երևանի քաղաքապետին դրան կցելով համայնքի ղեկավարի կարծիքը:
- Մարզպետը համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին համայնքից ստացած փաստաթղթերը եռօրյա ժամկետում ներկայացնում է կառավարություն՝ կցելով իր կարծիքը:
- Համայնքի ավագանին համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու առաջարկությունը կարող է քննարկել համայնքի ղեկավարի լիազորություններն ստանձնելուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո:

Համայնքի ավագանու անդամի այլ պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումը

Համայնքի ավագանու անդամը չի կարող միաժամանակ՝

1) աշխատել նույն համայնքի ղեկավարի աշխատակազմում, համայնքի բյուջետային հիմնարկներում, լինել համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավար:

2) լինել մեկ այլ համայնքի ղեկավար կամ ավագանու անդամ:

3) աշխատել իրավապահ, պետական անվտանգության և դատական մարմիններում:

Սույն հոդվածով սահմանված, ինչպես նաև զինված ուժերում ծառայելու կամ ծառայության անցնելու դեպքերում համայնքի ավագանու անդամը պարտավոր է մինչև ավագանու հերթական նիստը գրավոր հրաժարվել ավագանու անդամությունից, հակառակ դեպքում նրա լիազորությունները դադարեցվում են:

Համայնքի ավագանու անդամի իրավունքները

Համայնքի ավագանու անդամն իրավունք ունի՝

1) առաջարկություններ ներկայացնել ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ:

2) նախապատրաստել և ավագանու քննարկմանը ներկայացնել հարցեր, որոշումների և ուղերձների նախագծեր:

3) համայնքի ղեկավարից պահանջել և ստանալ նրա գործունեության վերաբերյալ պաշտոնական տեղեկանքներ.

4) համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումները կամ գործողությունները բողոքարկել դատարան, եթե խախտվել են նրա՝ որպես ավագանու անդամի իրավունքները.

5) ստանալ դրամական փոխհատուցում՝ սույն օրենքով սահմանված կարգով իր պարտականություններն իրականացնելու հետևանքով կատարած ծախսերի դիմաց:

Համայնքի ավագանու անդամի պարտականությունները

Համայնքի ավագանու անդամը պարտավոր է իր գործունեության ընթացքում առաջնորդվել օրենքով և համայնքի բարօրությանն ուղղված համոզմունքով:

Համայնքի ավագանու անդամը պարտավոր է՝

1)մասնակցել ավագանու նիստերին.

2) պարբերաբար հանդիպել համայնքի բնակչության հետ, համայնքի ընտրողներին տեղեկացնել համայնքի ավագանու աշխատանքների մասին.

3) մասնակցել ավագանու կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելությունների.

4) չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների (ծնող, քույր, եղբայր, երեխա) շահերին.

5) անհամատեղելի պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում անհապաղ գրավոր տեղյակ պահել ավագանուն կամ համայնքի ղեկավարին:

Համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը

Համայնքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝

1) դադարեցվել է նրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

2) նա դադարել է համայնքի բնակիչ լինելուց.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով նա դատապարտվել է ազատազրկման և կրում է պատիժը.

4) նա զորակոչվել կամ ծառայության է անցել զինված ուժերում.

5) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նա անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել.

6) նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն է զբաղեցնում.

7) նա մեկ տարվա ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից.

8) նա հրաժարական է տվել.

9) նա մահացել է:

Բացառությամբ սույն հոդվածի 9-րդ կետի, սույն հոդվածով նախատեսված դեպքերում ավագանու անդամի լիազորությունները դադարեցվում են համայնքի ավագանու հերթական նիստը սկսվելու պահից: Դրա վերաբերյալ համայնքի ավագանին կազմում է արձանագրություն, որն ստորագրում են ավագանու մյուս անդամները կամ համայնքի ղեկավարը:

Սույն հոդվածի 9-րդ կետով նախատեսված դեպքերում ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են ավագանու որոշմամբ: Նիստ գումարելու անհնարինության դեպքում ավագանու մյուս անդամները կազմում են ավագանու անդամի լիազորությունների դադարեցման մասին արձանագրություն:

Համայնքի ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը

Եթե համայնքի ավագանու անդամի լիազորությունների դադարեցման հետևանքով անհնարին է դառնում համայնքի ավագանու հետագա նիստերի անցկացումը, ապա ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են ավագանու մնացած անդամները կամ համայնքի ղեկավարը:

Տվյալ արձանագրությունը համապատասխան մարզպետի միջոցով ներկայացվում է պետական լիազորված մարմին: Կառավարությունը, օրենքով սահմանված կարգով,

պետական լիազորված մարմնի ներկայացմամբ, նշանակում է ավագանու արտահերթ ընտրություններ:

Ավագանու անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են նաև, եթե օրենքով սահմանված կարգով տվյալ համայնքը վերակազմակերպվում է որպես այլ վարչատարածքային միավոր:

Համայնքի ավագանու անդամի ծախսերի հատուցումը

Համայնքի ավագանու անդամը, իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց, իր ցանկությամբ և ավագանու որոշմամբ կարող է ստանալ ամսական դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի ամենամսյա պատգամավորական ծախսերի մինչև 30 տոկոսի չափով:

Համայնքի ավագանու գործունեությունը համայնքի բյուջեի հաստատման ժամանակ

1. ՀՀ կառավարության կողմից համայնքների համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո երկամսյա ժամկետում համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը:
2. Համայնքի բյուջեի նախագիծը ավագանու անդամներին է ուղարկվում քննարկումից առնվազն մեկ շաբաթ առաջ:
3. Պետական բյուջե ընդունելիս համահարթեցման նպատակով տրամադրվող դոտացիաների նախնական թվերը փոփոխվելու դեպքում, համայնքի ղեկավարը երկշաբաթյա ժամկետում ավագանու հաստատման է ներկայացնում բյուջեի համապատասխան փոփոխությունները:
4. Համայնքի բյուջեի նախագիծը ավագանուն է ներկայացնում համայնքի ղեկավարը, որը և պատասխանում է ավագանու անդամների հարցերին:
5. Համայնքի ավագանու անդամները բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առաջարկություններ, որոնք քննարկում են ավագանու նիստում: Եթե ավագանու անդամի առաջարկությունը նախատեսում է նոր ծախսեր ապա նա պարտավոր է նշել համապատասխան ֆինանսական միջոցների աղբյուրները: Համայնքի ղեկավարը քննարկումներից հետո կարող է վերցնել մեկ շաբաթյա ժամանակ, ներկայացված նախագծի մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու համար:
6. Նշված ժամկետում համայնքի ղեկավարը հրավիրում է համայնքի ավագանու նիստ և ներկայացնում իր դիրքորոշումը բյուջեի ավագանու առաջարկած փոփոխությունների վերաբերյալ: Բյուջեի նախագիծը համայնքի ղեկավարը քվեարկության է դնում

